Փոխադարձ ճամաճայնութեամբ սպասուհին քանի մը օրուան կամ շաբթուան ընթացքին կը հասնի Պէյրութ եւ անհրաժեշտ քննութիւններու ենթարկուելի ու փաստաթուղթերը ամբողջացնելէ ետք անոր համար կը սկսի կեանքի նոր հանգրուան մը, որ մշուշուտ է եւ անորոշութիւններով լեցուն: Այդ վարկեանէն սկսեալ անոր ճակատագիրն ու ապագան կախեալ կը դառնայ քանի մը անձերու քմահաճոյքէն, տրամադրութենէն եւ մարդկայնութենէն:

Սպասուհին կը մտնէ տունը եւ անոր դիրքն ու կացութիւնը կը ճշգրտի տնեցիներուն կողմէ՝ ինք ընդհանրապէս իրաւունք չունենար միջամտելու կամ վիճելու, որովհետեւ իրեն համար տրուած գումարներուն փոխարէն ինք պէտք է ենթարկուի հրամաններուն, ընդունի ու համակերպի իր ճակատագիրին:

Փակ դռներու ետին անորոշ է, թէ ինչ կը սպասէ իւրաքանչիւրին եւ ամէն մէկը, ըստ իր «բախտին», կը տանի իրեն վիճակուած կեանքը, որովհետեւ ինք կամ իր երկիրին մէջ ապրող ընտանիքը կարիք ունին իրեն տրուած գումարներուն եւ օժանդակութեան: Ան նաեւ անտեղեակ է իր իրաւունքներէն, եւ թէ՛ երբեք իրաւունքներ գոյութիւն ունին, չի գիտեր, թէ որուն օգնութեան պէտք է դիմէ եւ խորհուրդ հարցնէ:

Այսօր սպասուհիներ պահելու լայն տարածում գտած երեւոյթը անմիջականորէն կապուած է մարդոց դասակարգային պատկանելիութեան եւ նիւթական կացութեան հետ: Անիկա ձեւով մը եղած է «քաղաքակիրթ» եւ նիւթապէս ապահով ընտանիքի մը տարրական պէտքերէն մէկը: Սպասուհի ունենալը սկսած է նմանիլ տան մէջ առարկայ մը ունենալուն, ան պէտք է ներկայ ըլլայ մարդոց եւ ընկերութեան դիմաց իրենց «վարկը» պահելու գոյոց ընտանիքներուն մէջ, եթէ նոյնիսկ ան չատ քիչ գործ կ'ընէ եւ տանտիրինը գրեթէ ոչինչ կը վստահի անոր: Բարեկեցիկ, երբեմն միջակ դասակարգի եւ նոյնիսկ անկէ վար ընկերային մակարդակի պատկանող ընտանիքներու կիներ կ'ուզեն անպայման սպասուհիներ ունենան: Ըստ անոնց, սպասուհիներու ընկերակցութեամբ թմբակուելու եւ բարեկամութիւններու այցելութիւն տալը ձեւով մը սկսած է մաս կազմել իրենց կենսաձեւին:

Բնականաբար կան ընտանիքներ, որոնք իսկական կարիք ունին օժանդակութեան: Այս պարագային սպասուհիները կը հասնին անոնց օգնութեան եւ կը թեթեւցնեն անոնց ծանր բեռը: Սակայն որոշ չափով անմարդկային է այս արարածները վաճառելու եւ անոնց հաշուոյն սակարկութիւններ ընելու ձեւը:

Սպասուհիներ ապահովելու, այս առնչութեամբ ծառայութիւններ մատուցելու կողմէն գրասենեակներ հաստատուած են երկրի գրեթէ բոլոր շրջաններուն մէջ եւ անոնք ընդհանրապէս սպասուհիներուն մասին կը խօսին իրենց առարկաներ, որոնք զուրկ են ամէն տեսակի մարդկային իրաւունքներէ եւ զգացումներէ:

Ըստ աշխատանքի նախարարութեան տեղեկութիւններուն, Լիբանանի մէջ գոյութիւն ունին արտօնագրուած 150 հաստատութիւններ, որոնց կողքին նաեւ կայ հաստատութիւններու փոքր թիւ մը, որոնք կ'աշխատին անօրէն ձեւով: Անոնցմէ իւրաքանչիւրը տարեկան շուրջ 150 սպասուհի բերելու արտօնութիւն ունին:

Սպասուհիներ ունենալու կարելորութեան տարածման հետ լայնօրէն տարածուած են նաեւ այս գրասենեակները, եւ անոնք սկսած են բաւական աշխուժ գործունէութիւն ձեւաւելլ Լիբանանի տարածքին: Աւելին ու աւելին բուն իսկարներ կրող անոնց ծանուցումները սկսած են գրաւել թերթերու, ամսագրերի եւ ճամբու պաստառներու գլխաւոր դիրքերը: Ասկէ մեկնելով՝ մրցակցութիւնը աւելցած է գրասենեակներուն միջեւ, եւ իւրաքանչիւրը աւելի մատչելի դիմում եւ աւելի լաւ տուեալներով ծառայութիւններ կ'առաջարկէ քաղաքացիին: Սպասուհիներ բերելու գլխաւոր պայմանները կը հանդիսանան՝ տարիքը, որ պէտք է ըլլայ 16 - 25ի միջեւ, ամսականը՝ ըստ փորձառութեան, 100էն 300 տոլարի միջեւ, ծառայութեան համար որոշուած ժամանակաշրջանը, որ ընդ-



Հանրապէս մէկ տարի կ'ըլլայ եւ, ասոնց կողքին, որեւէ արկածի կամ անհաճոյ դէպքի պարագային՝ զայն փոխարինելու կարելիութիւնը:

Սակարկութեան առարկան մարդ արարածն է այս պարագային եւ սակարկողը՝ կրկին մարդ արարածը, սակայն անոնց տարբերութիւնը միայն մէկ բան է՝ առաջինը կարիք ունի դրամի, որպէսզի կարենայ իր ու ընտանիքին ապրուստը ապահովել, իսկ երկրորդը կարելիութիւն ունի դրամ ծախսելու եւ իր ուզածն ու ցանկացածը ունենալու:

Սպասուհի պահելու երեւոյթը, տանտիրինը օգնելու եւ անոր բեռը թեթեւցնելու կողքին, այսօր ունի իր տարբեր երեսները, որոնք իսկական հարցեր կը յառաջանեն լիբանանեան կեանքին մէջ եւ կը վտանգեն ընտանիքներուն խաղաղութիւնը ու կայունութիւնը:

Տան աշխատանքներուն օժանդակութեան համար եկած այս սպասուհիները որոշ ժամանակ ետք կը վերածուին տան բոլոր գործերն ու պարտականութիւնները կատարող անձերու եւ կը ստանան նաեւ տանտիրինը բոլոր պատասխանատուութիւնները: Տանտիրինները նոյնիսկ կուրորէն եւ ամենայն հանգստութեամբ իրենց գաւակներուն կրթութիւնը ու հոգատարութիւնը կը յանձնեն այդ օտար սպասուհիին, եւ գաւակները իրենց մարբէրէն աւելի կը տեսնեն այդ սպասուհիները, կը սիրեն գանոնք ու կը կապուին անոնց...:

Կացութիւնը բաւական ահաբեկ կը դառնայ, երբ մայրը չի գիտնար, թէ ինչ են իր գաւակներուն կարիքները, նախասիրութիւնները եւ սովորութիւնները, ու այն ատեն կ'անդրադառնան, թէ իրենք որքան հեռու են իրենց ընտանիքէն:

Սպասուհիներուն մեծամասնութիւնը կ'ապրի տուններու մէջ եւ չի կրնար ասանց արտօնութեան դուրս ելլել: Կան ուրիշներ, որոնք անձնական գործ կ'աշխատին ժամական մարքուտիւն ընելով եւ լիբանանցիի մը կամ ընկերութեան մը կողմէ հովանաւորուելով, իսկ կայ նաեւ փոքր թիւ մը, որ իրենք միայն աշխատող եկած կ'ըլլայ, սակայն տունէն փախելով՝ անօրինական փաստաթուղթերով կը շարունակէ աշխատիլ երկրին մէջ:

Լիբանանի մէջ նորութիւն չէ, որ այդ սպասուհիներէն ոմանք երկիր մտնելէ ետք կ'ուզեն ազատ ըլլալ եւ կը փորձեն ձեւով մը փախչիլ իրենց աշխատած տունէն ու ազատ ապրիլ: Այս նպատակը իրականացնելու համար անոնք ընդհանրապէս կը վնասեն այն տան, ուր կը բնակին, եւ չի բացառուի, որ գումարներ ստանալու համար ընտանիքի գաւակները դուրս չբերեն իրենց տուններէն, աւելի ուշ անոնց փոխարէն հսկայական գումարներ պահանջուով:

Կայ նաեւ մետաղի միւս երեսը, որ նոյնքան մտահոգիչ ու անմարդկային է: Այս սպասուհիները շատ յաճախ ամէն տեսակի բարտութեան եւ ծեծի կրնան ենթարկուիլ տանտիրիններուն կողմէ եւ անոնք կրնան օգտագործուիլ ամէն ձեւով: Մնացուց կերպով տան մէջ մնացող սպասուհիներէն շատեր օրուան գրեթէ 20 ժամը անընդհատ կ'աշխատին եւ անոնք հանգիստի ու արձակուրդի յատակ չունին: Անոնք գրկուած են տունէն դուրս ելլելու եւ աշխատիլ հետ չփման մէջ մտնելու իրաւունքէն, օրուան 24 ժամը անոնք կը մնան խոհանոցը կամ իրենց սենեակը՝ սպասելով նորանոր հրամաններու եւ պահանջներու:

Լիբանանեան տուններուն մէջ յայտնուած են պարագաներ, երբ սպասուհիները իրենց սխալներուն համար օրերով գրկուած են ուտելիքի եւ սնունդի եւ չէ բացառուած, որ ասոր կողքին անոնք ենթարկուին բիրտ միջոցներով ծեծի ու անբեւեակայնի պատիժներու:

Անոնցմէ ոմանք չկարենալով հանդուրժել այս կեանքը՝ կը փախչին տուններէն եւ կրնան կորսուիլ կամ անօրինական աշխատանք տանիլ ու բանտարկուիլ, իսկ ուրիշներ անձնապահովութիւն կը գործեն եւ կը թողնեն Լիբանանի մէջ, մինչ իրենց ընտանիքները կը սպասեն իրենց գաւակներուն յուրերուն եւ անոնց անդարձ վերադարձին... Այս մէկը կը հանդիսանայ երեւոյթի մէկ կողմը, սակայն բնականաբար կան ընտանիքներ, որոնք կը զիտակոյն, թէ իրենց տան մէջ աշխատող անձը անչունչ էակ մը չէ, անոնք կը յարգեն զայն եւ խղճմտանքով կը մօտենան անոր:

Երեւոյթը իր գանազան կողմերով առկայ է լիբանանեան կեանքին մէջ եւ անհատներ իրենց նկարագիրով, մտածելակերպով եւ խիղճերով կը տարբերին իրարմէ:

Սպասուհիներ թէ տանտիրիններ կրնան տարբեր մօտեցում ցուցարբել իրարու նկատմամբ եւ կացութիւններ փրկել կամ հարցեր ստեղծել:

Տուններուն դռները միշտ կը մնան փակ եւ անոնք ետին կատարուած՝ անյայտ, իսկ մարդոց ճակատագիրն ու կեանքը կախեալ կը մնայ այլ մարդոց մարդկայնութենէն եւ բարեացակամութենէն:

# ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

## ՄՆՈՒՆԴԻՆ ԱՆՀՐԱՎԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԾԵՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Տարիքի յառաջացման հետ մարմնի կարգ մը պէտքերը կը փոխուին: Կարգ մը պէտքեր կ'աւելնան, իսկ ուրիշներ կը պակսին մասնաւորաբար՝ սննդական գետնի վրայ: Ծերութեան շրջանը կը յատկանշուի մարմնի միսի եւ ճարպի ամբողջ կոյտի նահանջով: Այսուհանդերձ մարմնի հիմնական պէտքերը, ինչպէս՝ շնչառութիւնը ու արեան շրջադարձութիւնը, կը մնան նոյնը:

### ԿԵՆՍԱՆԻԹԵՐՈՒ ԵՒ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂՆԵՐՈՒ ԱՆՀՐԱՎԵՇՏՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԵՑՆԵՐՈՒՆ ՄՕՏ ԿԵՆՍԱՆԻԹԵՐԸ

Կենսանիւթերու նուազեցման հաւանականութիւնը կը բարձրանայ տարեցներուն մօտ: Ընդհանրապէս կը նուազին Սէ-Տէ-էօ. եւ Պէ-Կենսանիւթերու տեսակները: Կենսանիւթի պէտքերը կ'աւելնան հիւանդ եւ տկար տարեցներուն մօտ, որոնց ուտելիքի քանակը կը նուազի եւ բաւարար չափով արեւու ճառագայթի չեն կրնար ենթարկուիլ:

Այժմ գանազան ուսումնասիրութիւններ կը կատարուին անհաղիջ կենսանիւթերուն վրայ, որոնք մեծ դեր կը կատարեն մարմնի ֆրի ռաիոքալիներուն դէմ դնելու մէջ, որովհետեւ, ինչպէս որ գիտենք, Ա-էօ., Սէ-էօ. Պէ-Կենսանիւթերը հակաօքսիդանտներ են:

Երբ տեսնենք, թէ տարեցին մօտ որոշ կենսանիւթի մը պակասը կայ, անհրաժեշտ է դեղահատի օգտագործումը:

### ՄՆՈՒՆԻՒՆ ԿԱՐԳ ՄԸ ԻՄԱՍՆԵՐ

Փոքր սննդատուները (Micronutrients), որոնք կը բաղկանան հանքայիններից, կենսանիւթերէ եւ հիմնական տարրերէ (օլիգո-էլէմէնտ), անհրաժեշտ են մարմնին համար, սակայն մարմինը չ'արտադրէր զանոնք:

### ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՐԸ (ՕԼԻԿՕ-ԵԼԵՄԵՆՏ)

Այոններ են, որոնք մեծ են օգնական դեր կը կատարեն անզիմէնտ գործունէութեան մէջ: Ուտելիքները փոքր քանակութեամբ օլիգո-էլէմէնտներ կ'ապահովեն:

### ՀԱՆՔԱՅԻՆՆԵՐԸ

Անոնք մեծ դեր կը կատարեն անզիմէնտներու մարմնի այլ գործունէութիւններուն մէջ: Մարմնին մէջ հանքերուն քանակը կը չափենք կրամով: Ուտելիքներուն միջոցով օրական կարելի է հարկւրէն հազար կրամ ստանալու, նայած անոր տեսակին:

### ԿԵՆՍԱՆԻԹԵՐՈՒ ՊՎԱԿԱՅՍ ԱՍՏԱՋԱՅՆՈՂ ԿԱՐԳ ՄԸ ՊԱՏՃԱՌՆԵՐ

- Ուտելիքներու թեւեղութեան կամ սննդատուութեան պակասը, երբեմն՝ երկուքը միասին:
- Մուկի պէտքի աւելնալը՝ հիւանդութեան կամ ֆիզիքական պատճառներով:
- Կենսանիւթերը ծծելու եւ զանոնք սնունդի վերածելու կարողութեան պակասը:
- Առանձնութիւնը եւ սննդամիջոցի պակասը:

### ՀԱՆՔԱՅԻՆՆԵՐՈՒ ԱՆՀՐԱՎԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Հանքայինները եւ անհրաժեշտ տարրերը (օլիգո-էլէմէնտ) փոքր սննդատուներուն մաս կը կազմեն: Օրական 1500 քիլո քալորիէն աւելի փոքր սննդատուները բաւարար կը նկատուին: Սակայն ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, թէ տուել մնացող տարեց տղամարդոց 12 առ հարիւրը եւ տարեց կիներուն 30 առ հարիւրը օրական 1500 քալորիէն պակաս կը ստանան:

### ՔԱՆՏԻՏԻՒՆ ՔԱՆԱԿԸ

Վախժու տարիքը անցնելէն ետք, օրական ստանալիք քալորիէն քանակը պէտք է մօտաւորապէս ըլլայ 1500 միլիկալորի, բացի այն կիներէն, որոնք հորմոնային դարձանումի կ'ենթարկուին, հետեւաբար, 1000էն 1200 միլիկալորի օրական բաւարար է անոնց համար: Իսկ կենսանիւթի քանակը պէտք է ըլլայ օրական 800 (IU): Ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, թէ ուտելիքներուն միջոցով ստացուած Տէ. կենսանիւթին քանակը բաւարար չէ տարեցներուն համար, հետեւաբար անհրաժեշտ է դեղահատերու գործածութիւնը, սակայն, ուտելիքին միջոցով ստացուած քալորիէն քանակը բաւարար է:

### ՄԱԿՆԵՉՈՒՄԻՆ ՔԱՆԱԿԸ

Բնական պարագաներու մէջ մակնեգիոմը բաւարար կը նկատուի: Աւելորդ մակնեգիոմը անհրաժեշտ կը դառնայ, եթէ անհատը ջղային է, կամ՝ եթէ միզամանի բուժում կ'ենթարկուի, եւ կամ՝ եթէ ոգելից ըմպելիի պատճառով թունաւորուած է:

### ԵՐԿԱԹԸ

Երկաթին քանակը՝ օրական 15 միլիկալորի, որ ուտելիքին միջոցով կը ստացուի, բաւարար է: Աւելորդ երկաթը անհրաժեշտ չէ եւ կարգ մը պարագաներուն վտանգաւոր կը նկատուի:

### ՉԻՆԿԸ

Օգնական դեր կը կատարէ երկու հարիւրէ աւելի անզիմէնտներ: Չինկի պակասը պատճառ կը դառնայ համի եւ հոտի զգացողութեան տկարացման, ինչպէս նաեւ արեան տկարութեան:

### ԾԵՐՈՒԹԻՒՆԵՐԸ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՄԱՆ ԳՆԵՐ

- Կանոնաւորաբար հետեւիլ ծերունիին ծանրութեան: Անխախտ ծանրութիւնը ցոյց կու տայ, թէ ծերունին բաւարար է ճիշդ ձեւով սնունդ կը ստանայ:
- Հաւասարակշռուած սնունդ հայթայթել անոր:
- Չանպահանջ տեսակի ուտելիքներ պատրաստել անոր համար:
- Ընկերակից պահելու միջոցով անոր եւ առանձնութեան հետեւ պահել գիտնել:
- Ծաղերու տեսակները զարգարուած եւ գեղեցիկ ձեւով ներկայացնել՝ ծերունիին ախորժակը բանալու համար:



**ԱՖՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**RENT AND SALE**




• Over Bed Table  
• All Kinds Of Oxygen  
We Also Provide  
• Laboratory service.  
• Physiotherapist  
• Nurses Aids  
• P.T.S. (AMBULANCE)

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

**ՅՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (02) 242553/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**



**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

ՎԱՐՈՒԹԱՆ ՍԵԹԵԱՆԻ մահուան քառասունօրյակի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարվի Կիրակի, 2 Նոյեմբեր 2003, Ամբիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարին մեջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԱՐԱԼ ԿԵՊԵՆԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարվի Կիրակի, 2 Նոյեմբեր 2003, Նոր Ատանայի Ս. Աստվածածին եկեղեցույ մեջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԽԱՉԲԱՆԹԻԻ 5578 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵՍ
1. Ծածկոյթ - Հիւանդուբիւն:	1. Ամերիկեան ոստան - Դրախտ:
2. Այր մարդիկ - Կեղար, նպարանոց:	2. Արական անուն - Սուր ակոռայ:
3. Պողոտու ծառատեսակ - Գամ:	3. Ծանօթ - Պղպղալ:
4. Արբած:	4. Հոլովակերտ մասնիկ - Երախարիք:
5. Շատակեր - Մարի - Տառի մը անունը:	5. Արեւ - Սպանացի պարոն - Արական օտար անուն:
6. Թերի, կիսաւարտ - Ձիւ մագ:	6. Ոսին - Շողակ:
7. Արական անուն - Լեզուով մը՝ այո՛:	7. Մզկիթի աշտարակ - Հանքային համեմ:
8. Դատարան - Հեծանոց:	8. Նոյն գիրերը - Շաղկապ - Ափրիկեան գետ:
9. Լեղի-Կուրդին, համետ:	9. Յուզուած - Ափրիկեան երկիր:
10. Այսինքն - Սարդ (հակ):	10. Գիր - Մոլորաքար:
11. Մայթ - Որոշուած գին:	11. Քնանալու սրահ:


**ԹԻ 5577**

**ԽԱՉԲԱՆԻՆ**

**ԼՈՒԾՈՒՄԸ**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ա	Բ	Վ	Ա	Ր	Ր	Ր	Ս	Կ	Ի
2	Ա	Լ	Ե	Ա	Կ	Կ	Ա	Ս	Ի	Լ
3	Մ	Ա	Ն	Ր	Ա	Ս	Մ	Տ		
4	Ա	Ջ	Ս	Ս	Ս	Ս	Տ	Ր	Ե	
5	Ճ	Ա	Ր	Ս	Ե	Ս	Ղ	Ո	Ի	
6	Ի	Ն	Ա	Ո	Ր	Ա	Ս	Ն	Ա	
7	Կ	Ն	Ե	Ր	Ա	Ն	Ե	Լ		
8	Ա	Ս	Ս	Ի	Կ	Ր	Ո	Պ	Ե	
9	Ք	Ա	Ր	Ք	Ա	Ս	Ս	Ս	Ս	
10	Ի	Գ	Ա	Ս	Ն	Ա	Ր	Գ	Ո	Ս
11	Լ	Խ	Ի	Ճ	Գ	Ի	Ի	Օ		

**bezdig\_mezdig@hotmail.com**



**ՍԱԿԱՐԱՆ**

Պէյրուքի սակարանին մէջ օտար դրամահոյներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթակի	28,65 - 28,85	լ.ն.
Քուեյթեան տինար	5122,00 - 5147,00	լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00	լ.ն.
Ա.Մ. Էմիրութեանց տիրամ	410,75 - 412,75	լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75	լ.ն.
Սէուտական ռիալ	402,00 - 404,00	լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00	լ.ն.
Եգիպտական կինէ	220,00 - 230,00	լ.ն.
Անգլիական սթերլին	2567,00 - 2577,00	լ.ն.
Չուիցերական ֆրանք	1136,00 - 1141,00	լ.ն.
Թրքական լիրա	98,75 - 99,25	լ.ն.
Կիպրական փաուստ	2975,00 - 3000,00	լ.ն.
Ճափոնական հապար եէն	13,85 - 13,95	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00	լ.ն.
Քանադական տոլար	1149,00 - 1154,00	լ.ն.
Աւստրալիական տոլար	1061,00 - 1066,00	լ.ն.
Եւրօ	1764,00 - 1774,00	լ.ն.

• ՈՍԿԻ  
Անգլիական մէկ ոսկի 147,000 - 152,000 լ.ն.  
Իրանեան մէկ ոսկի 132,500 - 137,500 լ.ն.  
Օմանեան մէկ ոսկի 122,500 - 127,500 լ.ն.  
Մեքսիկական փետոս 704.000 - 724.000 լ.ն.  
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 18,360,000 - 18,560,000 լ.ն.  
Մէկ օսն ոսկի 380,30 - 380,80 \$  
Մէկ օսն արծաթ 5,08 - 5,10 \$

• Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.  
Եւրօ 1.1701 - 1.1705  
Քանադական տոլար 1.3083 - 1.3088  
Չուիցերական ֆրանք 1.3247 - 1.3252  
Ճափոնական եէն 107.94 - 107.99  
Մէկ սթերլին 1.7039 - 1.7043

**Մէկ փոլար 580 դրամ**

• ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՂՐԹԵՐ  
Գինի Ա. 6շդում Գինի Բ. 6շդում  
Ա. կարգ 4,24 4,23  
Բ. կարգ - -

**ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՋԱՆԵԱՆ ՀԵՈ. 01-252852**

**☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆**

**ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)**  
Ապահով եղէք, որ օրը ունի յաջողութիւններ: Մի՛ երկմտիք. ուսանող ըլլաք թէ աշխատող մարդ, նոյնն է: Ապաւինեցէք ձեր սեփական ուժերուն եւ մի՛ ծուլանաք:

**ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
Ձեր աշխատանքները ապահովուած են մոլորակներուն օգնութեամբ: Կրթական մարզ ըլլալ թէ դատական հարց՝ դիրութեամբ պիտի լուծուի:

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
Ձեր հարազատներուն կամ ձեր բարեկամներուն հետ ինչ հարց որ ունիք, պիտի կարգադրուի դիրութեամբ: Կատարեցէք, ինչ որ որոշած էք:

**ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
Ձեր տրամադրութիւնը խանգարուած է կարգ մը անտեղի հարցերու պատճառով. եղածը պարզապէս գրգռութիւն է: Անհոգ մնացէք եւ աշխատեցէք:

**ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**  
Եթէ ընտանի անասուններ ունիք, զանոնք լաւ սնուցանեցէք, ապա թէ ոչ տարեք անասնաբուժի մը, որ պէսգի առողջապահական հարցեր չստեղծուին ձեր շուրջը:

**ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
Շատ ուրախ պիտի ըլլաք այսօր. անկարելի է, որ ժպիտ մը չունենաք ձեր դէմքին վրայ՝ ի տես ձեր շուրջը կատարուած աղուոր երեւոյթներուն:

**ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
Ընտանեկան յարկի տակ պէտք է որ ունենաք բարի տրամադրութիւն՝ ձեր շուրջ ստեղծուած խնդիրները կարգադրելու, որովհետեւ եղածները անիմաստ ու ոչինչ բաներ են:

**ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Ձեր ունեցած մտահոգութիւնները պիտի փարատին ինքնաբերաբար: Պիտի կարենաք կիրարկել որոշ հմտութիւն՝ նարտարութեամբ տնտեսելու ձեր առօրեան:

**ԱՆԵՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
Եթէ լուծելիք հարց մը ունիք, առանձին մի՛ ստանձնեք զայն լուծելու պարտականութիւնը: Դիմեցէք ձեր դրամատունը, ուրկէ պիտի ստանաք ցուցմունքներ փրկուելու համար այս խնդիրէն:

**ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
Օրը պիտի ըլլալ երջանկաբեր ձեզի եւ ձեր ընտանիքի համար: Միասնաբար պիտի ուրախանաք, որովհետեւ պատահած բախտաւորութիւնը կը պատկանի բոլորիդ:

**ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
Այսօր ամէն մարդ պիտի զարմանայ ձեր լուհեաց վերաբերումին, զուր որ այնքան պերճախօս էք եւ ընկերային: Միշտ այսպէս մի՛ մնաք:

**ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
Վստահութիւն ունեցէք ձեր անձին վրայ, որովհետեւ լեռները շարժելու ուժ ունիք: Ձեռնարկեցէք ինչ բան որ կ'ուզէք, ու պիտի յաջողիք: Աստուիքը պիտի պաշտպանեն ձեզ:

**ՕՐԱՏԵՏՐ**

ՓՈՒՍՏՈՐ / ՅՈՒՑԱՍՐԱԿ / ՉՐՕՅԱԿԵՐՉՅԵԹԻՒՆ

**ՂԱՏԱ ՍԱՂԻԷԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՅՈՒՑԱՍՐԱԿԵԱԸ**



**Ղատա Սաղիէի գործերն**

Լիբանանցի գեղանկարիչ Ղատա Սաղիէի «Ալիս Մուղապա» ցուցահանդէսը մէջ իր հերթական անհատական ցուցահանդէսով կը ներկայանայ հանրութեան: Մինչեւ 31 Հոկտեմբեր տեղի ունեցող այս ցուցահանդէսը կը կրէ «Փանորամա» խորագիրը եւ կը ներկայացնէ աւելի քան տասնեակ մը գիւղանկարներ եւ ջրանկարներ:

Վառ եւ զօրաւոր գոյներու ենթահողերով յատկանշուող հինգ մեծադիր իւղանկարները ունին նոր դասակարգութեան շունչ: Անոնք կը պատկերեն ընկերային պահեր, գեղեցիկ հագուածքով այրեր եւ կիներ ու ընդհանրապէս պերճ կեանքի մը պահերը: Այս իւղանկարները կարծէք կը պատմեն իրենց հերոսներուն պատմութիւնը, այնքան հարապատօրէն, որ կարծէք կը յստի կերպարներուն խնդրութիւն եւ անոնց բաժանելութիւնը մայնէրը:

Իր ամբողջութեան մէջ «Փանորամա» կը ներկայացընէ իբրևանեան ընկերութիւնը, յատկապէս՝ կիները: Գիշերային կեանքի վայելքներուն պատկերումին կողքին, անոր գեղանկարները կը պատկերումին կողքին, անոր գեղանկարները կը պատկերեն նաեւ արար կիներ, ծածկուած սեւ շայերով եւ քաղցած կապոյտի երանգներուն մշուշին մէջ:

Ղատա Սաղիէի գեղանկարները կը յատկանշուին իրապաշտ յուպականութեամբ եւ զգայնութեամբ:

**ԱՅՍՕՐ**

Նկարչական ցուցահանդէս «Ալիս», Մոնա Սանահի գործերը, «Ջաման» ցուցասրահ, մինչեւ 1 Նոյեմբեր:

Նկարչական հասարակական ցուցահանդէս «Պի - Ռոբ», «Էօթե» հիմնարկ, մինչեւ 19 Նոյեմբեր:

Նկարչական ցուցահանդէս՝ «Քալըր Եուր մայնո», Ժուլիանա Սէյրալիի գործերը, «Էսփաս Եւ. Տե.» ցուցասրահ, մինչեւ 15 Նոյեմբեր:

Նկարչական ցուցահանդէս՝ «Փուեն տը վի», Նապիլ Ղանտուրի գործերը, «Ռոշան» ցուցասրահ, մինչեւ 4 Նոյեմբեր:

Ձեռնդման արուեստի ցուցահանդէս՝ «Ըբրոս Քանթիլընթ», Ժիւլիանա Սաղիէի գործերը, «Փրենթ» ցուցասրահ, մինչեւ 23 Նոյեմբեր:

Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փայեսթիւն աւան 1948», Ֆրանսական Մշակութային կեդրոն, մինչեւ 31 Հոկտեմբեր:

**ՕՐԵՐԵԻՈՅԹ**

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003

**ՊԵՅՐՈՒԹ ՄԱՍԱՐ ԱՄՊՈՏ**

**ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵԿ՝ 25°C**

**ԳԻՇԵՐ՝ 20°C**

**ԽՈՒՍԻՈՒԹԻՒՆ՝ 67%**

**ԱՉԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ**

30 Հոկտեմբեր 1953

**ՔՈՒՆԻՄՊԻԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐԸ ՍԿՍԱՆ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐՈՒՆ ՍԵՇ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՏՐՈՒԻ**

Քոլումպիա համալսարանի հայազիտական-հայոց լեզուի (գրաբար թէ աշխարհաբար), գրականութեան, պատմութեան, հայ-հնդեւրոպական լեզուագիտութեան եւ հայ բարբառագիտութեան դասընթացները սկսած են 24 Սեպտեմբերին «Ֆիլոզոֆի Հոլ» սրահին մէջ եւ պիտի շարունակուին թէ՛ ցերեկները եւ թէ՛ երեկոները: Այս տարի մասնաւորաբար ուշադրութիւն պիտի դարձուի անոնց, որոնք կը փափաքին հետեւիլ դերասանական դասերու՝ հայ բեմերու վրայ խաղալու համար, ինչպէս նաեւ անոնց, որոնք կ'ուզեն ուսուցչութեան պատրաստուիլ:

Հայ մշակոյթի դասընթացները յառաջ պիտի տարուին ցուցադրութեամբ պարզ թէ գունաւոր ժապաւեններու:

**ԱՅՍՕՐ՝ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ**

- 1918.- Մուտրոսի դաշնագիրով Հայաստանի Հանրապետութիւնը կը ստանայ Կարսի եւ Արտահանի շրջանները:
- 1920.- Թուրքերը կը գրաւեն Կարսը:
- 1971.- Մահ ձարտարապետ Սիբայէլ Սազմանեանի (Երեւան):
- 1991.- Կազատագրուի Տոլ գիւղը:



**ԿՐԵՄԼԻՆԻ ԱՆՉՆԱԿԱԶՄԻ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ  
ԱԼԵՔՍԱՆՏՐ ՎՈԼՈՇԻՆ  
ՀՐԱԺԱՐԱԾ Է  
ԽՈՏՈՐՔՈՎՍՔԻԻ  
ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԷՄ  
ԻՔՐԵԻ ԲՈՂՈՔ**

ՄՈՍԿՈՒԱ, 29 (ԱՅՓ).- Թուսիտյ մէջ քաղաքական տագնապը աւելի էս սրած է Չորեքշաբթի օր այն տեղեկութիւններէն ետք, թէ Կրեմլինի անձնակազմի ուժեղ պատասխանատուն հրաժարած է իբրեւ բողոք «Եուրոս» ընկերութեան տնօրէնին ձեռքաւարտութեան դէմ, որ երկրին սակարանային շուկաները ուժգին ցնցած է:

Առեւտրական «Վեոնոսթր» օրաթերթը յայտնած է, որ նախագահ Վլատիմիր Փութին երեքշաբթի գիշեր ընդունած է Ալեքսանտր Վոլոշինի հրաժարականը, Կրեմլինի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ քանի մը ժամուան հանդիպումէ մը ետք:

Կրեմլինի մամուլը գրասենեակը մերժած է արտայայտուիլ այս մասին, իսկ առեւտրական «Քոմմերսանթ» օրաթերթը ըսած է, որ Վոլոշինի քայլին մասին քանի մը օր պաշտօնական յայտարարութիւն պիտի չկատարուի մինչեւ որ անոր յաջորդը գտնուի:

«Ինթըրֆաքս» լրատու գործակալութիւնը հաղորդած է, որ ըստ Կրեմլինի մէկ աղբիւրին, Փութին որեւէ հրամանագիր չէ կ'ըսած իր վարչակարգին մէջ փոփոխութիւններու առնչութեամբ:

Օրաթերթերու տեղեկագիրներու համաձայն, Վոլոշին իր հրաժարականը ներկայացուցած է Շաբաթ օր՝ Թուսիտյ ամէնէն մեծահարուստ անձնատրութեան «Եուրոս»-ի տնօրէն Միխայիլ Խոտորովի ձեռքաւարտութեան հասկի քանի մը ժամ ետք:

Վոլոշին Կրեմլինի մէջ մէկն է հազուագիտ անձնատրութիւններէն, որոնք Փութինի նախորդին՝ Պորիս Ելցինի ժամանակաշրջանէն մնացած են: Ան ղեկավարն է վարչակարգին մէջ խմբակի մը՝ ծանօթ իբրեւ «ընտանիքը», որ պայքար կը մղէ վերջերս յայտնուած գաղտնի սպասարկութեանց նախկին գործակալներու «սիրովիքի» խմբակին դէմ:

Կրեմլինի «աթոռ»ին ետին լուռ ուժը նկատուող է բարձրաստիճան ժողովներու միշտ Փութինի կողքին գտնուող Վոլոշին Թուսիտյ ղեկավարութեան մէջ երրորդ կարեւորագոյն դիրքին վրայ կը գտնուի:

Արեւմուտքցի ներդրողներու համաձայն, Վոլոշինի հրաժարումը՝ եթէ պաշտօնապէս հաստատուի, Դեկտեմբեր 7-ի խորհրդարանական ընտրութեանց նախօրէակին քաղաքական «անկայունութիւնը» աւելի պիտի սրէ:

Եթէ ան իսկապէս հրաժարի, վարչապետ Միխայիլ Քախանով Ելցինի ժամանակաշրջանէն Փութինի վարչակարգին մէջ գոյատեւող վերջին անձը պիտի ըլլայ:

**ԻՐԱՆ «ՔԱՅԻՏԱ»Ի ԳԾՈՎ  
ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ  
ՊԻՏԻ ՉՓՈԽԱՆՑԷ**

Իրանի կառավարութիւնը երէկ յայտնած է, թէ «Քայիտա»-ի առնչուող իր ունեցած տեղեկութիւնները Մ. Նազանզանբու պիտի չփոխանցէ, Ուաշինկթընի ըսելով, թէ պէտք է «գործնական քայլեր» տեսնէ տիալոկի վերականգնել առաջ:

Կառավարութեան բանբերը՝ Ապտոլլա Ռամազանզատէ, թղթակիցներու ըսած է, թէ Իրան Մ. Նազանզանբու կամ անոնց ապահովութեան սպասարկութիւններուն հետ որեւէ կապ չունի, «հետեւաբար որեւէ պատճառ չկայ անոնց հետ գործակցելու» տեղեկութիւններ տալու համար:

Ուաշինկթըն կը պահանջէ, որ Իրան «Քայիտա»-ի ձեռքաւարտել անդամներ իրեն յանձնուին, սակայն Իրան կ'ըսէ, թէ անոնք իրանեան ատենաներու մէջ պիտի դատուին:

Բանբերը յայտնած է, թէ Իրան կրնայ բնաւ ալ չհրապարակել ձեռքաւարտելներուն ինքնութիւնը:

Միւս կողմէ, Ռամազանզատէ հակադարձած է Մ. Նազանզանբու արտաքին գործոց փոխ նախարար Ռիչչըրտ Արմիթէճի երեքշաբթի օրուան մէկ յայտարարութեան, թէ Ուաշինկթըն կրնայ Իրանի հետ սահմանափակ բանակցութիւններ ունենալ:

«Մ. Նազանզանբու կողմէ գործնական քայլեր կ'աւելնկային»: Կարելի չէ մէկ կողմէ սպառնալ եւ մեր ունեցած քննարկ ստուգել, ապա բանակցութիւններ պահանջել», յայտնած է ան:

Ամէնէն կարեւորն ու առաջնահերթը, ըստ բանբերին, այն է, թէ Ուաշինկթըն պէտք է դադարի «մեզ ամբաստանել»:

Երեքշաբթի օր, Արմիթէճ ամերիկեան Մերակոյտին արտաքին յարաբերութեանց յանձնարումին ըսած է, թէ Մ. Նազանզանբու կրնան սահմանափակ բանակցութիւններ ունենալ Իրանի հետ, սակայն բնականոն յարաբերութիւններ օրակարգի վրայ չեն:

Ան յայտնած է, որ Ուաշինկթըն մտահոգ կը մնայ Թեհրանի հարեկազան խմբակներու հանդէպ ցուցաբերած զօրակցութեան, ըսելով, որ իր վարչակարգը «երկողմանի եւ ըզմակողմանի ճիշդ ի գործ կը դնէ, վերջ տալու համար ահարեկազանի կազմակերպութիւններու հանդէպ Թեհրանի զօրակցութեան»:

**ՎԱՍԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԸ ԿՆՔՈՒՄԸ  
ԿԸ ՅԵՏԱԶՊՈՒԻ**

Մինչ այդ, երէկ կը թուէր, որ Իրան եւ Ռուսիա գրեթէ յառաջդիմութիւն չեն արձանագրած բանալի համաձայնագրի մը գծով՝ երկրին կորիզային ուժանիւթի առաջին գործարանին կառուցումը առաջ մղելու համար:

Ռուսիա կը կառուցէ հարաւային Իրանի մէջ Պուչէհի հնոցը, սակայն անիկա ըսած է, թէ որեւէ վառելիքի պիտի չհայտնուի մինչեւ որ Իրան ընդունի գործածուած ամբողջ վառելիքի վերադարձնելը:

**ՔԻՄԻԱԿԱՆ ՉԷՆՔԵՐՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԱՐԳԻԼՈՂ  
ՕՐԷՆՔԸ ԱՅԴՔԱՆ ԱԼ ՉԻ ՅԱՐԳՈՒԻՐ**

ՄԻՆԿԱՓՈՒՐ, 29 (ԱՅՓ).- ՄԱԿ-ի կազմակերպութիւններէն՝ Քիմիա-

**ՀԱՐԱՄԱՅԻՆ ՔԱԼԻՖՈՐՆԻԱ  
ԱԲԵԼԻ ԲԱՆ 11 ԸԱԶԱՐ ԸՐՇԷՋՆԵՐ  
ԿԸ ՊԱՅՔԱՐԻՆ  
ԱՂԵՏԱԼԻ ԸՐԴԵՐԻՆ ԴԷՄ**



ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, 29 (ԱՅՓ).- Աւելի քան 11 հազար հրշէջներ Չորեքշաբթի օր պայքար կը մղէին Քալիֆորնիայի քաղաքներէն մէկը՝ Սեյնթ-Լուս Անճելըսի երկրամասին մէջ: Քալիֆորնիայի տարածուած հրդեհներուն ծուխը արելը «կը հրդեհներուն դէմ, որոնք առնուապէս 18 քաղաքներու մէջ քանդած են, քանի որ 2000 բնակարան եւ տասնեակ հազարաւոր մարդիկ տեղահան ըրած են: Ամերիկեան երկրորդ մեծագոյն քաղաքին Լոս Անճելըսի երկրամասին մէջ քանդուած են 224 հազար հեքթարի վրայ տարածուած հրդեհներուն ծուխը արելը «կը ծածկէր»: Քալիֆորնիայի նախկին կառավարիչ Կրէյ Տէյլօր Երեքշաբթի օր խօսելով 14 հրդեհներուն մասին ըսած է, թէ նախագր կը դիմագրաւէ իր ամէնէն ծանրակշիռ աղէտը, աւելցրէ:

կան Չէնքերու Արգիլման կազմակերպութեան ընդհանուր տնօրէն Ռոնալդ Փիլքըրթը Չորեքշաբթի օր յայտնած է, թէ ահարհի տարածքին կառավարութիւններ պէտք է շտապ կերպով ենթարկուին միջազգային համաձայնութեան մը արգիլելու համար ահարեկազաններու կողմէ քիմիական գէներութեան ձեռքբերումը: Ան Միակափուրի մէջ ըսած է, թէ Քիմիական Չէնքերու Համաձայնութիւնը կ'ընթացէ 157 երկիրներու յանձնառուութիւնը «բնաւ ալ գոհացուցիչ չէ»: Անդամ երկիրներուն 40 առ հարիւր միայն գործադրած է պահանջ մը որ՝ դեգրելու օրէնքներ, որոնց նպատակը քիմիական գէներութեան տարածու-

մընուակցեցնել է արգիլել, որ ահարեկազաններ ձեռք գտնեն, յայտնած է համաձայնութեան քանդումը համաձայնութիւնը կ'ընթացէ 157 երկիրներու մէջ կ'ընթացնայ, խորհրդաժողովին: Դրական տուեալ մը այն է, թէ քիմիական գէներութեան գոյութիւն ունեցող պահանջներուն քանդումը կարգ մը երկիրներու մէջ դէպի առաջ կ'ընթանայ, դիտել տուած է ան: Միակափուրի արտաքին

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կը ներկայացնեն՝

# ԱՌՈՒՄԷ

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Նոյեմբեր 18ին  
ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԻՍՏԵՋՈՒՄԸ  
ԵՐԵՎԱՆԻ 8:30-ԻՆ ՍՏԱՆԵՐԸ՝  
Trading Places 01 611600, CD-Thèque Ashrafieh - ABC,  
Համազգայինի գրախանութ, Նարեկացի գրախանութ  
եւ Ազգային Կարգոյն

**BYBLOS BANK**

# ԶԱԻԱՆՔ

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԳՈՍԻ ԿՐԵՄԼԻՆ

**ԼՈՒՍԱՆԿԱԿԱՆ ԶՈՒՅԱԶԱՆՆԵՐ**  
Լուսանկարիչ՝ ՀՐԱՅԻ ԲԱԶԷ

Բացում՝ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր 2003.  
Երեկոյեան ժամը 8:00-ին  
Լեռն եւ Սոֆիա Յակոբեան Լեզգայիմ Գոլէճ

Ծանօթ՝ Սոցիալիստական պիտի շարունակուի  
Երեկոյեան ժամը՝ 10:00 - 21:00  
Չորեկոյեան ժամը՝ 10:00 - 14:00

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՐ**  
Բանախօս՝ ԲՅԿ. Հայկազուն Ալվրցեան

Գեղարուեստական Յայտագիր

Երեկոյեան ժամը 8:00-ին  
Բակոբ Տէր Լիբանան Երեւան

**ԱՇԽԱՏԱԿԱՆ ՀԱԻԱՐ**  
Չորեկոյեան ժամը 2003.  
Առաւօտեան ժամը 11:00-ին  
Բակոբ Տէր Լիբանան Երեւան

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՐ ԵՒ  
ՅՈՒՅԱԶԱՆՆԵՐ**  
Չորեկոյեան ժամը 7:00-ին  
«Գ. Կրեմլին» սրահ

**ԿՐԵՄԼԻՆ ԵՒ ՅՈՒՅԱԶԱՆՆԵՐ**  
Հիմնադր. 6 Նոյեմբեր 2003  
Երեկոյեան ժամը 7:00-ին  
Ազատամարտ Լեզգայիմ Լեզգայիմ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱԻԱՐ**  
Ուրբաթ, 7 Նոյեմբեր 2003.  
Կէսօրուան ժամը 12:00-ին.  
Կազմակերպութեամբ՝  
Հայկազան Համալսարանի «Heritage Club»-իմ.  
Հայկազան Համալսարանի սրահ

**ԿՐԵՄԼԻՆ ԵՒ ՅՈՒՅԱԶԱՆՆԵՐ**  
Շաբաթ, 8 Եւ Կիրակի 9 Նոյեմբեր 2003  
Ժամը 10:00-21:00  
Ազգային - Հ.Մ.Բ.Մ. Կազմակերպութեամբ  
Համալսարանի Լեզգայիմ